



Հագարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան

Ճանապարհ դեպի լավ կյանք

Բագրևանը մեկն է այն 7 համայնքներից, որոնք անմիջականորեն օգտվում են ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում վերականգնված Արմավիր-Իսահակյան-Գյումրի ճանապարհի 24.5 կմ հատվածից: Այն գտնվում է Հայաստանի հյուսիսում՝ Թուրքիայի սահմանի հարևանությամբ:

Հովիկ Աղաջանյանը Բագրևանի 980 բնակիչներից մեկն է, ով, չնայած դժվարություններին, չի լքել իր ծննդավայրը ավելի հեշտ վաստակի ակնկալիքով: Նա դասավանդում է տեղի դպրոցում, մշակում է իր 8.5 հեկտար հողակտորը, որտեղ ցորեն ու գարի է աճեցնում և զբաղվում մեղվաբուծությամբ: Այժմ, երբ Բագրևանը Գյումրիին կապող ճանապարհը վերականգնվել է, Հովիկ Աղաջանյանը ու նրա բազմաթիվ համագյուղացիներ, կսկսեն իրենք տանել իրենց արտադրանքը շուկաներ: Մինչ այդ մարդիկ էժան գնով վաճառում էին այն ագրո-գործարարներին, ովքեր գալիս և տեղում ֆերմերից գնում էին ցորենը, գարին և մյուս մթերքները: «Հիմա ես ինքս կսկսեմ վաճառքի տանել իմ ցորենն ու գարին և դա կավելացնի իմ եկամուտը: Այդպիսով, ես 15-20 դրամ կշահեմ մեկ կիլոգրամի մեջ», -ասում է Հովիկ Աղաջանյանը:



Արմավիր-Իսահակյան-Գյումրի մայրուղու 24.5 կիլոմետր ճանապարհահատվածի վերականգնումը գրեթե ավարտված է: Շահառու համայնքների բնակիչներն արդեն իսկ վայելում են նոր ասֆալտապատված ճանապարհը, որը պաշտոնապես շահագործման կհանձնվի 2008թ-ի դեկտեմբերի 15-ին:

«Նախքան ՀՄՀ-Հայաստան ծրագրով արված այս վերականգնման աշխատանքները՝ մեզանից 40 րոպե էր պահանջվում Գյումրի հասնելու համար», -ասում է Բագրևանի գյուղապետ Արտյոմ Պետրոսյանը,-«Այժմ մենք Գյումրի ենք հասնում 15-20 րոպեում: Մեկ այլ դրական փոփոխություն. գգալի ավելացել է այդ ճանապարհով երթևեկող մեքենաների քանակը: Նախկինում Երևան և Գյումրի գնացող ավտոբուսները մեզ մոտով անցում էին ոչ ավել, քան օրական մեկ անգամ,

իսկ հիմա՝ 2 ժամը մեկ»:

Հովիկ Աղաջանյանը հավատում է, որ մի օր իր համայնքը կսկսի ծաղկել:

Բացի դեպի շուկաներ ելքի մատչելիությունից Բագրևանի բնակիչները նաև շահեցին նրանով, որ շինարարական աշխատանքներն

իրականացնող կապալառուն այս գյուղի բնակիչներից շատերին ընդգրկեց շինարարության մեջ: Եվս մեկ դրական տեղաշարժ. կապալառուի միջոցներով նորոգվեց և կահավորվեց Բագրևանի գյուղապետարանի շենքը, որը մինչ այդ խղճուկ վիճակում էր «... միայն պատերն էին և մի քանի ապակի»:

Ռոռման խնդիրների պատճառով Բագրևանցիները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ: Ստացված կաթը նրանք վաճառում էին շուկաներում, ինչը նրանց վրա ավելի թանկ էր նստում, սակայն այժմ, նորոգված ճանապարհների պարագայում, երբ շուկան ավելի հասանելի է դարձել, նրանք աստիճանաբար սկսում են վաճառել այն վերամշակողներին, ովքեր գալիս և տանում են կաթը հենց գյուղից: Արդյունքում աճում է թե՛ կաթի արտադրությունը, թե՛ անասունների քանակը և թե՛ եկամուտը: Եկող տարվանից ՀՄՀ-Հայաստանը կվերականգնի ևս 73 համայնքի ճանապարհներ ամբողջ Հայաստանում՝ 273 կմ ընդհանուր երկարությամբ:



Բագրևանի գյուղապետարանի նորոգված շենքը և վերականգնված ճանապարհը: Շինարարությունն ընթացքի մեջ է: